տալիս են ընդհանրապէս իւղեղէն կերակուրներ։ Երբ ծնընդեան օրերը մօտենում է, կինը յայտնում է, որ ինքը ցաւ է։

Երկունքի ժամանակ ներկայ են լինում հարևան կանայք և տատմայրը, որ ինչպէս ամեն տեղ, այստեղ էլ լինում են պառաւ կանայք, ուստի և կոչւում են տատ-մայրեր։ Սա մինչև երեխայի ազատելը ծննդկանի բարձի տակ դնում է մի երկաթ, հրացան, դանակ, Նարեկ կամ Աղմոս, որպէսզի երեխան «լավանգ» չլինի, այսինքն սատանաները մօտ չգնան և երեխային չփոխեն կամ չսպանեն։

Եթէ ծնուածը տղայ է, մի հոգի հօր գդակը խլում է և «աչքի լուս» տալիս. — «աչքդ լուս, տղայ է»։ հայրն էլ մի կամ երկու ղուռն փող նուէր է տալիս, որ տեղական բարբառով «մուշտուլուղ» է կոչւում. իսկ եթէ ծնուածը աղջիկ է, ասում են «աչքդ լուս, գողը պատը ծակել է»։

Երբ երեխան ծնւում է, իսկոյն աչքերը շփում, քթից օդ փչում, ապա լւանում են. պորտը կտրում և ձգում են մի սնդուկի մէջ պահում, որպէսզի երեխան չմեռնի, իսկ ընկերը թաղում են տան բակի մէջ. նորածին մանուկներին աղէն այստեղ էլ անխտիր կերպով պահպանել է, իբրև հայկական հնաւանդ սովորութիւն։ Այնուհետև տղացկանը տեղ ու բարձով պառկեցնում, երեխան խանձարուրով փաթաթում, դնում են մօր աջ կողմը գետնի վրայ մինչև մկրտելը. 5 — 6 օր շարունակ ծննդկանին տալիս են ուտելու միմիայն նաբաթով բրշտուք, և ջրի փոխարէն խմեցնում են դառչինով թէյ, իսկ երեխային 3 օր կարագ են կերցնում։

Երեխան ծնելուց մի ժամ յետոյ մօտիկ ազգականները, բարեկամները և դրացիները գալիս են շնորհաւորութեան և հետներն իբրև ընծայ բերում են քաղցր կերակուրներ, այն է, հաւ, փլաւ, ձուածեղ, կարագ, իւղ, բրշտուք և տալիս ծննդկանին ուտելու։ Բերողին հիւրասիրում են թէյով, ճաշով և նրանց լաչիկին 1 ղուռն փող կապում։

Այնուհետև 5 — 6 օր անց ժամկոչի (մուղցի) հետ գալիս է քահանան և հիւրասիրւում. նրան իբրև նուէր տալիս